ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ- Ծ1141.Մ11001/25-5

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» «հունվարի» 2025թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ի դեմս կազմակերպության տնօրեն Հ.Բալասանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N2060-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից՝ 904,235,800 (ինը հարյուր չորս միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել Կազմակերպությունում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած՝ ծանր սահմանափակ կարողություններ ունեցող 6-18 տարեկան երեխաների և մինչև 18 տարեկանը տվյալ կազմակերպություն կամ միևնույն կանոնադրական նպատակները հետապնդող այլ կազմակերպություն ընդունված և մանկատանը 18 տարին լրացած՝ նույն ախտաբանական վիճակում գտնվող և նույն ծավալի ծառայությունների կարիք ունեցող՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, նրանց ապահովում է սննդով, հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով, անկողնային և անձնական հիգիենայի պարագաներով, տրամադրում է սոցիալ-հոգեբանական օգնության, առաջնային բժշկական օգնության և սպասարկման, իրավական խորհրդատվության, աջակցող միջոցներով ապահովման, բժշկասոցիալական փորձաքննության կամ ֆունկցիոնալության գնահատման, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղղորդման, ուսումնադաստիարակչական ծառայությունների, ազատ ժամանցի և սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպման ապահովում՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. սույն պայմանագրի N 1 հավելվածի ձևաչափով նախատեսած միջոցառումների իրականացման մասին ներկայացված կատարողական ամսական հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել (դրական/բացասական եզրակացություն) պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսած միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի համար տրվում է եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել կազմակերպությունում հաշվետու ժամանակաշրջանում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի.

2.4.6. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.7. Սույն Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:

2.4.8. 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով"

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվում է Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 5 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում խնամվողների թվաքանակի շարժի և փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 և 4 հավելվածների:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է սույն պայմանագրի N 1 հավելվածին կից Ձևաչափի, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N2060-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները)

վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը 904,235,800 (ինը հարյուր չորս միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1. Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է փոփոխուն և հաստատուն ծախսեր.

5.3.1. փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 126,290,000 (մեկ հարյուր քսանվեց միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ շահառուի հաշվարկով տարեսկզբից աճողական միջին գինը փոփոխուն ծախսերի գծով կազմում է 1384 դրամ:

Վերը նշված մեկ խնամվողի հաշվարկով փոփոխուն ծախսերի գծով մեկ օրվա գինը (տարեսկզբից աճողական) իր մեջ ներառում է ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշումով տարանջատված տարիքային չափաքանակները:

5.3.2. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 777,945,800 (յոթ հարյուր յոթանասունյոթ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 5 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցվող գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են

երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2025թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածները բաղկացած են 13 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական տուն-3	Գ. Նոր Խարբերդ, Բաղրամյան 58
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011016863 ՀՎՀՀ 01506515	Հ/Հ 900438000318 ՀՎՀՀ 03801255
Նախարարության գլխավոր քարտուղար	Կազմակերպության տնօրեն
Ա.Մուրադյան (ստորագրություն)	Հ. Բալասանյան (ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

N 1 Հավելված
2025թ. « » « » կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11001/25-5 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ն իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած՝ ծանր սահմանափակ կարողություններ ունեցող 6-18 տարեկան երեխաների և մինչև 18 տարեկանը տվյալ կազմակերպություն կամ միևնույն կանոնադրական նպատակները հետապնդող այլ կազմակերպություն ընդունված և մանկատանը 18 տարին լրացած՝ նույն ախտաբանական վիճակում գտնվող և նույն ծավալի ծառայությունների կարիք ունեցող՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, նրանց ապահովում է սննդով, հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով, անկողնային և անձնական հիգիենայի պարագաներով, տրամադրում է սոցիալ-հոգեբանական օգնության, առաջնային բժշկական օգնության և սպասարկման, իրավական խորհրդատվության, աջակցող միջոցներով ապահովման, բժշկասոցիալական փորձաքննության կամ ֆունկցիոնալության գնահատման, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղղորդման, ուսումնադաստիարակչական ծառայությունների, ազատ ժամանցի և սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներ:

Կազմակերպությունն իրականացնում է 250 շահառուի շուրջօրյա խնամք՝ 238.65 հաստիքային միավորի միջոցով:

N ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը
1.	«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ»	Առանց ծնողական խնամքի մնացած ծանր սահմանափակ կարողություններ ունեցող 6-18 տարեկան երեխաների և մինչև 18 տարեկանը տվյալ կազմակերպություն կամ միևնույն կանոնադրական նպատակները հետապնդող այլ կազմակերպություն ընդունված և մանկատանը 18 տարին լրացած՝ նույն ախտաբանական վիճակում գտնվող և նույն ծավալի ծառայությունների կարիք ունեցող անձանց շուրջօրյա լրիվ խնամքի, երկարաժամկետ կամ	1. Իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած՝ ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող՝ 6-18 տարեկան երեխաների և մինչև 18 տարեկանը տվյալ կազմակերպություն կամ միևնույն կանոնադրական նպատակները հետապնդող այլ կազմակերպություն ընդունված և մանկատանը 18 տարին լրացած՝ նույն ախտաբանական վիճակում գտնվող և նույն ծավալի ծառայությունների	1. Խնամվողների ընդունելությունը, հաշվառումը, խնամքի ծառայությունների տրամադրումը և դուրսգրումը իրականացվում է ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգով,	2025 թվականի դեկտեմբերի 31	Սույն պայմանագրով նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում

		որոշակի ժամկետով կացարանով ապահովումն է, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, սննդով, հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով, անկողնային և անձնական հիգիենայի պարագաներով ապահովումն է, նրանց սոցիալ-հոգեբանական օգնության, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, աջակցող միջոցներով ապահովման, բժշկասոցիալական փորձաքննության կամ ֆունկցիոնալության գնահատման, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականաց-նող կազմակերպություն ուղղորդման, ուսումնադաստիարակչական ծառայությունների, ազատ ժամանցի և սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումն է:	կարիք ունեցող անձանց ընդունելությունը և շուրջօրյա լրիվ խնամքի, երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարանի տրամադրումը, 2. Ապահովում է գնահատված կարիքի հիման վրա կազմված անհատական սոցիալական ծրագրին համապատասխան՝ խնամվողի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, 3. Ապահովում է կազմակերպությունում խնամվողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակությունները և պահանջմունքները, 4. Ապահովում է կազմակերպությունում խնամվողի առողջ ապրելակերպի (սնունդ, սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմաններ, կազմակերպում է խնամվողների մասնակցությունը մարզական, մշակութային միջոցառումներին, մրցույթներին, երգի, պարի, նկարչության, մարզական և այլ խմբակների պարապմունքներին՝ հաշվի առնելով նրանց առողջական վիճակը, տարիքային առանձնահատկությունները, հակումները, նախասիրությունները, 5. Կազմակերպում է կազմակերպությունում խնամվողի ամառային հանգիստը, 6. Իրականացնում է կազմակերպությունում	համաձայն ՀՀ կառավարության 28.11.2002 թ թիվ 1907-Ն որոշման, 2.Համաձայն ՀՀ կառավարության 2004 թ N 1324-Ն որոշման 1) Շահառուի խնամքի իրականացումը ընտանեկանին հնարավորինս մոտ պայմաններում (հանգստի սենյակի, դասապատրաստման, անձնական իրերի համար նախատեսված պայմաններ): 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի պաշտպանությունը՝ ա) հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, բ) դաժան վերաբերմունքից, գ) աշխատանքի շահագործումից, դ) հանցագործություններից,		

			խնամվողի վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը միտված աշխատանքներ, 7. Ապահովում է կազմակերպությունում խնամվող երեխայի կրթությունն ու դաստիարակումը, այդ թվում՝ կազմակերպում է երեխաներին հիմնական կրթություն մատուցելը, որն իրականացվում է հանրակրթական դպրոցներում, 8. Ապահովում է կազմակերպությունում խնամվող երեխայի դասապատրաստման գործընթացի կազմակերպումը, այդ գործընթացի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, դասապատրաստման ընթացքում ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ հաշվի առնելով երեխայի տարիքային առանձնահատկությունները, 9. Հսկողություն է իրականացնում կազմակերպությունում խնամվողների առաջադիմության և կրթական հաստատություն հաճախելու նկատմամբ, 10. Կազմակերպությունում խնամվողի հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակությունները և պահանջմունքները հաշվի առնելով՝ իրականացնում է վերջիններիս բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը միտված ուսումնադաստիարակչական այլ ծառայություններ, 11. Ըստ անհրաժեշտության իրականացնում է կազմակերպությունում	ե) անուշադրությունից և անարդարությունից, զ) առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: 3. Հանրակրթական, ներառական դպրոցում ընդգրկված դպրոցահասակ երեխաների թիվը: 4. Խմբակներ, մշակութային միջոցառումներում ընդգրկվածների թիվը: 5. Հատուկ դեպքերում տարհանման հնարավորությունների, պետական կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին երեխաներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելուն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում:		

			խնամվողի բժշկասոցիալական փորձաքննության կամ ֆունկցիոնալության գնահատման կազմակերպում՝ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ձեռքբերման, նախապատրաստման, բժշկասոցիալական փորձաքննություն կամ ֆունկցիոնալության գնահատում իրականացնող մարմիններ և բժշկական հաստատություններ ուղեկցման և բժշկասոցիալական փորձաքննության կամ ֆունկցիոնալության գնահատման իրականացման համար անհրաժեշտ այլ հարցերում աջակցելու միջոցով, 12. Իրականացնում է կազմակերպությունում խնամվողի էրգոթերապիա, կազմակերպում է կազմակերպությունում խնամվողին անհրաժեշտ՝ վերականգնողական, տեխնիկական միջոցներով և այլ օժանդակ սարքերով, այդ թվում՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովումը, 13. Կազմակերպությունում խնամվողի համար կազմակերպում է բուժական ֆիզկուլտուրա, իրականացնում է կազմակերպությունում խնամվողի խոսքի դժվարությունների շտկման աշխատանքներ, 14.Տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող խնամվողի հետ իրականացնում է միջավայրին հարմարվելուն և ինքնուրույնությունը զարգացնող աշխատանքներ, 15. Կազմակերպությունում խնամվողի համար կազմակերպում է օկուպացիոն թերապիա (վերականգնողական վարժանքներով թերապիա), 16. Կազմակերպությունում խնամվողի՝ հոգեկան	6. Երեխային առողջ, անհրաժեշտ քանակությամբ և տարիքին համապատասխան սննդով ապահովում, մահճակալի և անհրաժեշտ այլ կահույքի տրամադրումը համաձայն ՀՀ կառավարության կողմից ընդունված 2007թ N 815-Ն որոշման: 7. Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1444-Ն որոշման՝ Շահառուների սոցիալական անհատական ծրագրերի մշակում և իրականացում: 8. Սոցիալական վերականգնողական միջոցառումների արդյունքում մասնակի կամ ամբողջովին վերականգնված, հասարակություն ներառվածների թիվը: 9. ՀՀ օրենսդրության համապատասխան սանիտարահիգիենիկ նորմերի պահպանումը:		

			առողջության խնդիրներ ունենալու դեպքում, ցուցաբերում է աջակցություն նրա կլինիկական վիճակի գնահատման նպատակով սկրինինգ-հետազոտությունների ազմակերպմանը, 17. Կազմակերպությունում խնամվողին ցուցաբերում է աջակցություն կենսաբանական ընտանիքի և ազգականների հետ սոցիալական կապերի վերականգնման և (կամ) ամրապնդման և նրան ընտանիքի վերադարձնելու հարցում, եթե դա բխում է խնամվողի շահերից, 18. Կազմակերպությունում երեխային խնամք տրամադրելու ամբողջ ժամանակահատվածում, այդ երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում դրա մասին տեղեկացնում է կազմակերպության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին, 19. Կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված կազմակերպության աշխատողների որակավորման բարձրացմանը, նրանց կարողությունների և հմտությունների զարգացմանը, 20. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:	10. Առողջ ապրելակերպի (սնունդ, սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում: 11. Ներառական կրթությունում ընդգրկված երեխաների թիվը: 2. Ընտանիքի և հարազատների հետ կապի պահպանումը: 13. Ընտանիքների հետ վերամիավորված ածների թիվը:		

*Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ միջոցառումների

իրականացման մասին կից ձևաչափով ներկայացված ամսական բովանդակային հաշվետվության համաձայն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 22-ի N 69-Ա/1 հրամանի 2.10 կետին և նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության, ինչպես նաև նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, որոնք հիմք են հանդիսանում Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատելու, ինչպես նաև Կազմակերպության որակական ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75%-ով:

ՁԵՎԱՉԱՓ

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Արդյունքային ցուցանիշներ	Ընդամենը
	Արդյունքային ցուցանիշ ամսվա վերջին օրվա դրությամբ		
1	Շահառուների թվաքանակ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
	Այդ թվում երեխաների թիվ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
	Արդյունքային ցուցանիշ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում		
2	18 տարեկանը լրացած շահառուների թիվ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
3	Անգործունակ ճանաչվածների թիվ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
4	Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվ՝		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
5	Պալիատիվ խնամքի կարիք ունեցող շահառուների թիվ		
	Այդ թվում՝ 18 տարեկանը լրացած անձանց թիվ		
6	Անհատական սոցիալական ծրագրերով ապահովված շահառուների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
7	ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների թիվ		
8	Դպրոցում սովորող երեխաների թիվ		
	Այդ թվում՝ հատուկ դպրոցում սովորող երեխաների թիվ		
	Տնային ուսուցման մեջ ընդգրկված երեխաների թիվ		
9	15 և բարձր տարիքի երեխաների թիվ		
	Այդ թվում մասնագիտական կողմնորոշում ունեցող երեխաների թիվ		
10	Խմբակներում ընդգրկված շահառուների թիվ՝ այդ թվում		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
	Հաստատության ներսում գործող խմբակներում ընդգրկված շահառուների թիվն ըստ խմբակների (նշել		

	խմբակների ամբողջական անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրվածների՝ այդ թվում՝ երեխաների թիվը)		
	Հաստատությունից դուրս գործող խմբակներում ընդգրկված երեխաների թիվն ըստ խմբակների (նշել խմբակների ամբողջական անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրվածների՝ այդ թվում՝ երեխաների թիվը)		
11	Վարքային խնդիրներ ունեցողների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
12	Հաստատությունից դուրս բժշկական միջամտություն ստացածների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
	Այդ թվում՝ հոգեկան առողջության կենտրոն հոսպիտալացվածների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
13	Վերականգնողական միջամտություն ստացած շահառուների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
14	Մերձավոր ազգականների, ծնողների հետ հանդիպում ունեցած շահառուների թիվ		
	Այդ թվում ՝ երեխաների թիվ		
15	Կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման նպատակով գնահատվածների թիվ		
	Այդ թվում՝ երեխաների թիվ		
16	Հաստատությունից դուրս գրված շահառուների թիվ		
	Կենսաբանական ընտանիքների հետ միավորվածների թիվ		
	Այդ թվում ՝ երեխաների թիվ		
	Որդեգրվածներ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
	Խնամատար ընտանիքներ տեղափոխված երեխաների թիվ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
	Խնամակալ ընտանիքներ տեղափոխված շահառուների թիվ		
	Այդ թվում ՝ երեխաների թիվ		
	Այդ թվում՝ աղջիկների թիվ		
	Այլ հաստատություններ տեղափոխված շահառուների թիվ		
	Շրջանավարտ լինելու հիմքով դուրսգրված և անկախ կյանքի անցած շահառուների թիվ		
	Մահացածների թիվ		
17	Հաստատությունում գրանցված բռնության դեպքերի թիվ		
	Շահառուների միջև (նշել դեպքերի թիվն ըստ բռնության տեսանկների)		
	Այդ թվում ՝ երեխաների		
	Անձնակազմի կողմից (նշել դեպքերի թիվն ըստ բռնության տեսանկների)		

18	Վերապատրաստում անցած աշխատակիցների թիվ		

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
Նախարարության գլխավոր քարտուղար՝ __________________ Ս.Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ __________________ Հ. Բալասանյան (ստորագրություն) Կ. Տ.

N2 Հավելված

2025թ.«   »«   » կնքված

N ԴՏՊ- Ծ1141.Մ11001/25-5 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1	Շահառուների միջին ամսական թվաքանակը	250 շահառու
2	Հաստիքային միավորների թվաքանակը	238.65 հաստիքային միավոր
3	Մարդ/օրերի տարեկան քանակը	91250 մ/օր
4	Մեկ շահառուի հաշվարկով տարեկտրից աճողական միջին գինը փոփոխուն ծախսերի գծով	1384 դրամ
5	Փոփոխուն ծախսեր	126,290.0 հազ. դրամ
6	Հաստատուն ծախսեր	777,945.8 հազ. դրամ
7	Տրամադրվող դրամաշնորհի չափը	904,235.8 հազ. դրամ

այդ թվում՝

ա/ ըստ ամիսների մարդ/օր

Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)	Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)
հունվար	7750	հուլիս	7750
փետրվար	7000	օգոստոս	7750
մարտ	7750	սեպտեմբեր	7500
ապրիլ	7500	հոկտեմբեր	7750
մայիս	7750	նոյեմբեր	7500
հունիս	7500	դեկտեմբեր	7750
Ընդամենը			*91250*

բ/ փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույցը

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	10,726.0	հուլիս	73,352.0
փետրվար	20,414.0	օգոստոս	84,078.0
մարտ	31,140.0	սեպտեմբեր	94,458.0
ապրիլ	41,520.0	հոկտեմբեր	105,184.0
մայիս	52,246.0	նոյեմբեր	115,564.0
հունիս	62,626.0	դեկտեմբեր	126,290.0
Ընդամենը			*126,290.0*

գ/ փոփոխուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Ապրանքի նվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Սննդամթերք	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	126,290.0
Ընդամենը	x	x	**126,290.0**

Հաստատուն ծախսերի գծով

ա/ կատարվելիք հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	64,627.0	հուլիս	454,119.0
փետրվար	130,292.0	օգոստոս	518,746.0
մարտ	194,918.9	սեպտեմբեր	583,718.7
ապրիլ	259,892.0	հոկտեմբեր	648,346.0
մայիս	324,519.0	նոյեմբեր	713,318.8
հունիս	389,491.8	դեկտեմբեր	777,945.8
Ընդամենը			*777945.8*

բ/ կատարվելիք ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական կարրերի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	668,815.9
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	107,719.9
Այլ ծախսեր	480000	1,410.0
Ընդամենը		*777,945.8*

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

Ս.Մ[illegible]

(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն

Հ. Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ

N3 Հավելված
« » « » 2025թ. Կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11001/25-5 պայմանագրի

Հաշվետվություն

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից .....ամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում գտնվողների թիվը	Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում					ժամանակավոր բացակայող խնամվողների թիվը	ժամանակավոր բացակայությունից վերադարձած խնամվողների թիվը	Խնամվողների թիվը հաշվետու ամսվա վերջում	այդ թվում		Դուրս գրված խնամվողների մարդ/օրերի թիվը	ժամանակավոր բացակայող խնամվողների բացակա մարդ/օրերի թիվը	Նոր ընդունված և ժամանակավոր/բացակայությունից վերադարձած խնամվողների մարդ/օրերի թիվը	Խնամվողների փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում խնամվողների միջին թիվը	Պլանային մարդ/օրերի թիվը
						վերադարձել են ընտանիք	մահացել են	հանձնվել է խնամատար ընտանիք	ուղեգրվել է	տեղափոխվել են այլ հաստատություններ				տղամարդ	կին						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1													0							#DIV/0!	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	0	0	0	0	0	0	0	0	0	x	x	x	x	x	0	0	0	0	#DIV/0!	0

ՊՈԱԿ-ի տնօրեն

(ստորագրություն) (անուն,ազգանուն)

Գլխավոր հաշվապահ

(ստորագրություն) (անուն,ազգանուն)

Կ.Տ.

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

Ա.Պողոսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն՝

Հ.Բալասանյան
(ստորագրություն)

Կ.Տ

N 4 Հավելված
2025թ.« »« » կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11001/25-5

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11001 «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Խարբերդի մանանգիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին.....ամսում փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա ծախսերի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ					Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը											
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Հաստատված նախահաշվի գումարը	Ճշված նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Բարեգործական կազմակերպության անվանումը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Փոփոխուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Կենցաղային և հանրային սենդի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Հանրային սենդի նյութեր	426720						0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարված աշխատավարձ	411120									
	Դպրարանի դրոշմանիշի հիման վրա վճարված աշխատավարձ	411130									
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		411200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Պարգևատրումներ	411210									
	Դրամական խրախուսումներ	411220									
Էներգետիկ ծառայություններ		421200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210									
	Ջեռուցման ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310									
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	կապի աբոնենտային ծառայություններ	421410									
	փոստական խոսակցությունների վճար										
	միջքաղաքային խոսակցության գումար										
	ինտերնետային կապ										
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420									
Ապահովագրական ծախսեր		421500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի ապահովագրություն	421510									
Գույքի և սարքավորումների վարձակալություն		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի վարձակալություն	421610									
	Սարքավորումների վարձակալություն	421620									
Ներքին գործուղումներ		422100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին գործուղումների օրապահիկ	422110									
	Ներքին գործուղումների փոխադրամիջոցային ծախսեր	422120									
	Ներքին գործուղումների կրթանպատակային ծախսեր (աղբանոց, սանդարան, դպրոց և այլն)	422130									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական ծառայություններ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110									
	Հագուստ և համազգեստ	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Առողջապահական և լաբորատոր նյութեր		426600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Բժշկական քսենդրների նյութեր	426610									
Կենցաղային և հանրային սենդի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգիենիկ նյութեր)	426710									
	Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր սպասարկման)	426730									
Պարտադիր վճարներ		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ պարտադիր վճարներ	482390									
Այլ ծախսեր		485100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	485190									

Տնօրեն (ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ (ստորագրություն)

Նախարարություն
Նախարարության գլխավոր բաժնապետ՝ (ստորագրություն) Ս.Մոլոյան

Վերակազմակերպություն
Տնօրեն (ստորագրություն) Հ. Բալասանյան

N 5 Հավելված
2025թ. «___» «______________» կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11001/25-5 պայմանագրի

Նախարարություն՝ **Կազմակերպություն՝**

հասցե՝
հ/հ
հվհհ

հասցե՝
հ/հ
հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 20—թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 20—թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 20__թ–ից « »« » 20__թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով*	*Մեկ միավորի գինը*	*Մեկ միավորի համար փրամադրվող դրամաշնորհի չափը*	*Վճարման ենթակա գումարը*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
		(դրամ)	*(դրամ)*	*(դրամ)*	*(հազ. դրամ)*	
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Երեխաների շուրջօրյա խնամք	x	x	x	x	x	x
Փոփոխուն ծախս	Մարդ/օր					
Հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

Ընդունեց՝

/ստորագրություն/ ազգանուն

Կ.Տ

Հանձնեց՝

/ստորագրություն/ ազգանուն

Կ.Տ.

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

______________ Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն՝

______________ Հ. Բալասանյան
(ստորագրություն)
Կ.Տ

N 6 Հավելված
2025 թ.«___» «_____» կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11001/25-5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N __
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« » « » 20__թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20__թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կատարողի անվանումը՝
Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 20__թ.-ից « » « » 20__թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ ծառայությունները.

ՀՀ	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1	Երեխաների շուրջօրյա խնամք	Երեխաների սննդի, կրթական, սոցիալ-կենցաղային, բժշկական և այլ պահանջմունքների բավարարում				

Նշումներ անհամապատասխանությունների մասին ՝
Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն
/Դրական/բացասական/
Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ վարչության պետ

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մոսեսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն՝

_____ Հ. Բալասանյան
(ստորագրություն)

Կ.Տ